

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՍԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից կտրադրաման մէջ:

Ռուսարարարացիք հիմում են ուղղակի

Тифлисс. Редакция «Месак»

Խմբագրատունը բաց է առաժառան 10—2 ժամ

(բացի կիրակի և տոն օրերից)

Հայտարարութիւնն ընդունում է ամեն լիզրով:

Հայտարարութիւնների համար վճարում են

խրատարակի րուբլն 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԱԿԱՆ ԹՈՒՆՆԵՐ

Ուսուցչական ժողովները:—Այս րոբին տեսուած իւր: Ընդհանուր ուսուցչական ժողով Թիֆլիսում համակ Հոշույ: համակ հոր-Բայրադիտից: համակ Արօկիայից: համակ Պետերբուրգից: հերթին լուրեր:—«Մշակի» ընտանիքներ:—Յայտարարութիւններ:

ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

II

Այժմ դառնանք դէպի մեր ուսուցչական ժողովները և տեսնենք ի՞նչու և ի՞նչ նախապատրաստութիւններ են հարկաւոր մեզ:

Ամառը հաւաքվելու են ուսուցիչները, կը հաւաքվեն մի երկու հարիւր մարդ, գուցէ աւելի կամ պակաս. կառաջարկվեն անթիւ հարցեր: Մենք չունենք պրօգրամներ ո՛չ տարրական, ո՛չ միջնակարգ, ո՛չ արական և ո՛չ իգական ուսումնարանների համար: մեր ուսումնարանների կազմակերպութիւնը մի խօսք է ներկայացնում:

Մեր ուսուցիչները առաջին անգամ պէտք է հանդիպեն միմեանց, առաջին անգամ պէտք է իմանան միմեանց կարծիքները, առաջին անգամ պէտք է լսեն զանազան դատողութիւններ այլ և այլ հարցերի վերաբերութեամբ և վիճեն. այստեղ առաջին անգամ պէտք է իմանան թէ՛ զանազան դպրոցներում այս կամ այն դասագիրք է գործածվում և այլն և այլն:

Այսպիսի ընդհանուր ժողովներում մեծամասնութիւնը անշուշտ պէտք է լուր, անկարելի է որ ամեն մէկը դատէ, վիճէ, որովհետեւ դա կը լինէր մի բաբիլոնեան խառնակութիւն. բոլոր հարցերը նոր են և բազմաոտեսակ, կարծիքներ անթիւ են:

Այս տեսակ ժողովներում կը հանդիսանան երկու երեք մարդ, նրանք կը վիճեն, միացածները պիտի լինեն վեր թողած պէտք է լսեն: Գուցէ մի քանի իբր թէ որոշած հարցերի արձանագրութեան տակն էլ կը ստորագրեն, բայց ի՞նչ օգուտ: Նրանց չը յաջովեց իրանց կարծիքը յայտ-

նել այս կամ այն առարկայի մասին, այն կարծիքը չը մերժուեց. նրանք վերադառնում են իրանց տեղը և շարունակում են իրանց գործը առաջուայ պէս:

Մեզ հարկաւոր է ամենքի կարծիքը, ընդհանուրի և ոչ անհատների ձայնը, մեծամասնութեան պահանջները. առաջ հարկաւոր է իմանալ ի՞նչ կայ մեզանում և նա ի՞նչ դրութեան մէջն է և ապա մտածել ի՞նչ պէս պակասը լուացնել, վատը լուացնել: Մենք համոզված ենք (և մինչև անգամ հաստատ գիտենք), որ կան ուսումնարաններ, որոնց մինչև անգամ գոյութիւնը մեր թեմական տեսուչներին յայտնի չէ, ուր մնաց նրանց լաւ ու վատը:

Մենք այդպիսի ժողովներով ոչինչ չենք որոշել, եթէ չենք աշխատի մեր ուսուցիչներին նախապէս միմեանց հետ ծանօթացնել, մեր այլ և այլ ուսումնարանների վրա գաղափար տալ և այլն և այլն: Մենք չունենք այնպիսի մամուլ, որ կարողանար դրան ոչ թէ լիովին, այլ մինչև անգամ մասամբ ծառայել. մեր գաւառական թղթակիցների, «մեր ուսումնարանի գործը լաւ է գնում», «մեր իգական դպրոցի բանը բուրթ է» և այդ տեսակ խօսքերից շատ բան չես հասկանայ, ուսումնարանների վրա գաղափար չես կարող կազմել. մեզ հարկաւոր է ուրիշ միջոցի դիմել, մի միջոցին որը գուցէ շատերին խորթ թուի, բայց դա միակն է և մեր կարծիքով անհրաժեշտ է:

Միզա

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԸՆԴՀԱՆՈՐ ԹԻՍՈՒՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԹԻՖԼԻՍԻՄ

Ընթերցողներին «Մշակ» 142-դ համարից յայտնի կը լինի, որ օգոստոս ամսին (6-ին) Թիֆլիսի և գաւառներից եկած ուսուցիչների մի խումբ պատահական կերպով ունեցաւ Վայեանեան դպրոցում և ընթերցողներին մանկավարժական նիստ դպրոցական խնդիրների վերաբերութեամբ ընդհանուր խորհրդածութիւններ անցրու: Այդ ժողովներում, ի միջն այլոց,

ճնեց և մի բաղաւոր միաք է կազմել 1881 թւի ամառային արձակուրդին մի ընդհանուր ուսուցչական ժողով մեր դպրոցների ընդհանուր բարեկարգութեանց նպատակով, սորա համար, այդ ժողովը որոշեց՝ ներկայ 1880—81 ուսումնական տարուայ ընթացքում, թեմ. վերատեսուչ պ. Գեորգ Բարխուդաւրեանցի ընտրութեամբ, կազմել Թիֆլիսում երկու յանձնաժողով՝ ուսումնական և նախապատրաստելու ապագայ ընդհանուր ժողովը պարագիւր խնդիրները և տեսական և—հոգալու ընդհանուր ուսումնական ժողովի ծախքերը: Թեմ. վերատեսուչ պ. Գ. Բարխուդաւրեանցը սկսեց իր գործունէութիւնը հոկտեմբերի 6-ին, հրաւիրելով այդ երեկոյ, ժամի 7-ին, 42 անձինք, զինուորապէս տեղւոյ երկսեռ զբոսայրոցների ուսուցիչներ և տեսուչներ, նոյն պէս և մի քանի մասնաւոր անհատներ:

Ժողովը այդ երեկոյ պիտի զբաղվէր ուսումնական և անտեսական յանձնաժողովների ընտրութեամբ:

Սկզբում, ընդհանուր ժողովը յաջողվելու մասին, յայտնվեցան մի քանիների կողմից զանազան պետական կարծիքներ, զինուորապէս ծախքի վերաբերութեամբ, բայց այդ շարագուշակ ամպը ինքն լուր ինքեան փարատվեցաւ, երբ մէջ եկաւ աշխատանքի բաժանման գեղեցիկ սկզբունքը: Գիտար էր թեւում անտեսական յանձնաժողովի համար՝ հայեայթիւ այն գումարը, որ պիտի ծախսվէր զանազան թեմերի բազմաթիւ ուսուցիչների վրա, բայց ժողովը երկար վիճարանելուց յետոյ եկաւ այն եղանակով թեմ, որ Թիֆլիսի տնտեսական յանձնաժողովը հոգալու է միմյան Թիֆլիսի թեմի այն ուսուցիչների մի ամսուայ ծանապարհածութեւ և անուրը (բռնակարան կայ), որոնց հոգաբարձութիւնները կամ հասարակութիւնները միջոց չունեն հոգալու այդ ծախքերը, օրի համար և որոշվեցաւ ստանալ թեմ. վերատեսուչից այդ տեսակ ուսուցիչների վիճակագրական թւերը:

Բացի սորանից յանձնվեցաւ թեմ. վերատեսուչ Գ. Բարխուդաւրեանցին գրագրութիւններ բացելու միւս թեմերի վերատեսուչների հետ՝ տեղեկանալու, թէ կը կամենան արդեօք այդ թեմերի ուսուցիչները, վերջի շեղ պայմաններով, մասնակցելու ընդհանուր ուսուցչական ժողովին, այնպէս որ, եթէ միւս թեմերի հոգաբարձութիւնները, կամ հասարակութիւնները չը յանձն առնեն իրանց ուսուցիչների մի ամսուայ ծանապարհածութեւ և անուրը հոգալու, այն ժամանակ ժողովը պիտի սահմանափակվի միմյան Թիֆլիսի թեմի ուսուցիչներով:

Այսպէս, այդ երեկոյ ժողովը հասաւ իր նպատակին ընտրելով տնտեսական (5—6 հոգուց) և ուսումնական (30 հոգուց) յանձնաժողովը:

Հոկտեմբերի 13-ին, երեկոյեան ժամի 7-ին, դարձեալ Վայեանեան դպրոցի մի սենեակում հաւաքվեցան առաջին անգամ ուսումնական յանձնաժողովի անդամներ իրանց անելիքի վրա խորհելու: Այդ ժողովը նոյնպէս, կարելի է ասել, ունեցաւ իր արդիւնաւոր վախճանը: Այդ ժողովում ընտրվեցան չորս մասնաժողովներ:

ա) Ընդհանուր ուսուցչական ժողովի պարագիւր չափաւ մի ծրագիր կազմող յանձնաժողով՝ հետեւեալ անձինքներից:—Աւետիք Բարխուդաւրեանց, Վեդր Բարխուդաւրեանց, Ստեփանոս ա. ք. Տէր-Ստեփանեանց, Գեորգ Տէր-Աղեքսանդրեանց և Կարապետ Թեմուրազեանց: բ) Ծխական դպրոցների համար երեք ամսայ դասընթացով ծրագիր կազմող յանձնաժողով՝ հետեւեալ անձինքներից:—Կարապետ Թեմուրազեանց, Աւետիք Տէր-Յակոբեանց, Յով. Չիլիանեանց, Աւետիք Գալափեանց և տէր-Արսէն Բազրատունի:

գ) Միջնակարգ դպրոցների համար ծրագիր կազմող յանձնաժողովը հետեւալ անձինքներից:—Արշակ Նահապետեան, Ստեփանոս Պալասանեան և Նիկ. Խոսրովեանց:

Ընդհանուր հարցեր որոշող և թեմական վերատեսուչներին հաղորդող (վարչօրը մշակելու համար) մասնաժողովը հետեւալ անձինքներից՝ Աղեքսանդր Բիւրժեանց, Ա. Եղեկեանց և Յ. Նազարեանց: Այսպէս բաւական ենք համարում այս համառօտ տեղեկութիւնը հաղորդելով հասարակութեան և մասնաւոր մեր պաշտօնակիցներին, իսկ հետեւեալ համարներում շուտ շուտ կը դառնանք դէպի այս ամենակարեւոր խնդիրը:

Վերջիշեալ չորս յանձնաժողովները իրանց աշխատութիւնները նախ կը ներկայացնեն Թիֆլիսի ուսուցչական ժողովին, իսկ յետոյ՝ ընդհանուր ուսուցչական ժողովին:

Թ.

ՆԱԽԱԿ ԴՈՒՆՈՒՄ

9 հոկտեմբերի

Վարաբաղի աշխարհագրական դիրքը, նրա պաղարեութեան որպիսութիւնը և բնական կիւնքի գիւղատնտեսական արհեստների ժիր ու վարժ լինելը մանրամասնօրէն նկարագրելու հարկաւորութիւն չենք գտում, քանի որ շատ է խօսված այս մասին թէ՛ ժողով անցեալներում լրագրութեան մէջ, և թէ՛ վաղ ժամանակները պատմադրեանց մէջ: Բայց իմ նպատակս է Վարաբաղի վրա մի կարճ հայեացք ձգել և մի քանի միջին կէտեր պարզել, խմանալ: համար թէ ինչ զգալի տարօրինակ երևոյթ կայ սրա անտեսական հանգամանքներում, և թէ պատճառները ի՞նչ են:

Եթէ ներկայովստեմն կայ մի բերրի, արգաստեղ և կիմայի ամենայն յարմարութիւններով ձօն երկիր, յայտնի է որ բոլորից առաջնակարգ աստիճանում եղողը Վարաբաղն է: Եթէ կայ ներկայովստեմն մի ժողովուրդ, որը կարող է իր քրտինքի գնովը հողից հրաշալիքներ արտադրել, հանրածանօթ իրողութիւն է, որ զրանից յետագէմ չէ իր կուտուրական զարգացմամբ: Վարաբաղի ազգաբնակչութիւնը: Վարաբաղի գիւղացին խորշէ և անդրծովիւնից, և կը խորշէ, նա իր ընտա-

նեկան երջանկութիւնը ընդունել է և կընդունի աշխատանքի գաղափարի հետ զուգընթաց: Եւ այն սկզբունքի հետ չէ հաշտուիլ, թէ աշխատանքը կարող է անհատական ազնուութիւնը ստորացնել, ինչպէս կը կարծեն մի քանի բացառութիւն կազմողները:

Եթէ փորձելու համար մէկը աշխատասէր գիւղացու ձեռքից խլէ նրա բահը և աշխատանքի գործիք կազմող միւս առարկաները, և այդպիսով առիթ տայ մի քանի օր անգործ մնալու, այնուհետեւ նոյն գիւղացին իրան կը ներկայացնէ մի անգղայ մարմին: Արդհետեւ նա ինչքան որ նիւթական օգուտ է նշմարում աշխատութեան մէջ, նոյնքան էլ բարոյական և ֆիզիքական յոյժ ու առողջութիւն է ստանում: Դարաբաղի գիւղացին գիտէ թէ ինչ անհամեմատ առաւելութիւն է ինչ գերազանց արգասանքութիւն ունի իր հայրենիքի հողը, որի մէջ ծնվել է, անվել և կեանք է անցկացնում: Կա գիտէ որ նոյն հողը կարօտ է միայն մի աշխատող ձեռքի, և ահա նա իր վրա գործարկած ջանքի փոխարէնը մէկին հարկւարագատիկ կը վարձատրէ աշխատողին, որի իւրաքանչիւր մի կաթիլ քրտինքի փոխարէն կը ստանայ այնքան վարձ, որքանի վրա համեմատաբար ուրիշ երկիրներում շատ տարիներ ընթացքում մեծ գոհաբերութիւններ են անում:

Ով որ առիթ է ունեցել ծանապարհորդել Արարադի ընդարձակ դաշտավայրերը, և գտնէ հարեանցի կերպով զննել նրանց աշխարհագրական դիրքը, չի երկմար մեր ասածների ճշտութեանը վրա: Հուշուց դէպի Մարաշի ամունքը Ղաթայի վրայով տանող ծանապարհով ով առիթ է ունեցել երթեկեկել այն էլ յուրաքանչիւր օգոստոս ամիսներում, տեսած և զարմացած կը լինի, թէ ինչպէս բնութեան յարմարութիւնները մարդկային աշխատող ձեռքերի հետ միացած որպիսի հրաշքներ են արտադրել հողին: Եթեդ չայլ դժի ուղղութեամբ լայնատարած վայրերում մի անմշակ հող չի գտնվել, որ վերաբերուի աշխատասէր գիւղացու արօրին ենթարկված չը լինի: Օրվայ ամենատօթ միջօրէին, ծանապարհորդը արեգակի կիզել ծառադաշտերից պատսպարվելու համար, կարող է մինչև անգամ մտնել ցորենի հսկայական հասկերի ներքոյ և հանգստանալ, որոնք խիտ առ խիտ բարձրացած, և միմեանց զուլնները սեղմած կազմում են մի կատարեալ վրան, ուր արեգակի կիզել ծառադաշտի ազդեցութիւնը հազիւ թէ կարող է մուտք գործել:

Բնութեան այս տեսակ առատորէն բարեբեր շնորհած լինելը Արարադի գիւղացին լաւ հասկանալով չէ ինչպիսիւ և այն պարտականութիւնը կատարել, որը կախված է իրանից: Ուստի այս համեմառաջ գործակցութեան հետեւանքն ու արգասիքը իւրաքանչիւր մարդ չի գիտարանայ երեւակայել, թէ որպիսի առատութիւն և լիութիւն կը լինի: Սակայն ցաւ ի սիրտ կաննել, որ այսուամենայնիւ Ղաթաբաղի աղքատ դասակարգի նիւթական միջոցներին համապատասխան չէ այսօր ուտելիաց որ և իցէ միեւրբի գինը: Թէ ինչու է պատճառը, այդ կը պարզէ հետեւալը:

1879 թուականը անցաւ գնաց, բայց նրա սարսափելի հարուածը, նրա բոլորի վրա ազդած տխուր տպաւորութիւնը և նրա ընթացքում կատարված արտաձնիկ տեսարանների երեւակայութիւնը կը մնան անմոռանալի: Նոյն թուականը շատ բա-

նեկ թողեց մեզ համար յիշելիք, բայց նա շուշեցիներէ վրա այն տպաւորութիւնը թողեց, թէ կարող են մի և նոյն ձախող դէպքերը պատահել յաջորդաբար իւրաքանչիւր տարի: Այսպիսի երեւակայական գաղափարից դուրս, Հուշին ներկայացնում է այսօր հին նահապետական դարում երկրպագու ճգրիտ պատկերը: Արծես արանց մի Գովսեփ-գեղեցիկ մարգարէացած լինի, թէ եօթն տարիներ ընթացքում երկիրը կապկպելու է, և մի շեշտ անձրեւ անգամ երկրի արգասիքը չէ տեսնելու: և ահա շուշեցիք այսպիսով պատրաստվում են կարծես դիմաւորելու այն ստորինված եօթնամեայ թշուառութեանը, որը կրեց հին աւուրց Արիպտոսը:

Քաղաքային հրապարակում (որի մասին խոստանում էմ մի այլ անգամ խօսել և ընթերցողներին ծանոթացնել մեր այդ բերքային նշանակութեանը հետ) ուր որ գնաս, ում մօտ կանգնես, այն կը լսես թէ «ախպէր պէտմայ 200 կամ 300 փութ ցորեն առնեմ ամբարս լցնեմ, որ լուզիս բոլ ինի թահրիցը ըրեւումայ էս ձմեռն ալ հացը թանկ ա ինելու»: Եւ մեր քաղաքացիների տրամադրութիւնը, որոնց ունեւոր դասակարգը միմիայն այս յառաջիկայ ձմեռվան համար ուտելիաց պատրաստութեան վրա է խօսում, և որի կեղծի ներքոյ 3—4 տարիների համար պաշարի ղէներն են մթերում: Հուշեցի աղաներից իւրաքանչիւրը մի մի գործակատար բռնած գեղեցիկ ցորեն, դարի և այլն մեծ քանակութեամբ առնել են տալիս: Եւ եթէ մի գիւղում երկու գնողներ հանդիպում են միմեանց, մէկի հնարքը միւսի գործը արգելելու մասին առիթ է տալիս իրենց առեւտրի մթերքի գնի թանգանալուն: Զաւաթն պատահել է ինձ հարց առաջարկել գիւղացի պէտը կամ ցորենի բերողներին, թէ արդեօք ինչու են օր օրէ կեանքի այդ ամենամահաբաժնէ առարկաների գինը բարձրացնում, որն անմասնել է գառնում չբաւոր դասակարգին, մինչդեռ այս տարի իրենց հունձը չափազանց առատ է եղել: Նրանք ինձ պատասխանում են, թէ այս դէպքում յանցաւոր շարժիղը քաղաքացիք են, և նրանք այնպիսի ճիշտ փաստեր են բերում իրենց ասածը պարզուցանելու, որ ակամայ մարդ արհամարհանք է զգում դէպի շուշեցին: Գիւղացին ասում է՝ ինչպէս էժան վաճառեմ ալելու, մինչդեռ իմ գիւղումը տանս դրան առջեւում ցորենը մի և նոյն գնովն հազարաւոր խնդրողներ կան: Իսկ աստ միթէ՞ կարող եմ նոյն գնից որ և է զեշում անել: Եւ այսպիսով մարդ այն համոզմանն է հասնում, թէ կարելի է մի բնաղբում մեր քաղաքացիներին ստիպում լինի այսպէս վարվելու, որը ամօթ է բերում ընդհանուր մարդասիրութեան գաղափարներին:

Եւ համարձակ կարող եմ ասել, որ անցեալ տարի մեր Արցախում տեղի ունեցած թանգութիւնը միանգամայն արհեստական էր և ոչ թէ բնութեան պատիժ, որի համար պնդում են գործին անձանօթ անձինք: Ուստի և եթէ յառաջիկայ ձմեռն նոյնպիսի դէպքեր կրկնվեն, տխուր հետեւանքին բարոյապէս պարտական է մեր քաղաքացիներից ունեւոր դասակարգը: Այս վերջիններս այժմեանից սկսած իրանց համար ուտելիաց ահապէս մթերանոցներ են պատրաստում, և 3—4 ամեայ պաշարիցներով անշուշտ խնդրելու են: Այստեղ այս ըստ բնականին անհաճելի վարմունքին առիթ է ևս ինձ թոյլ եմ տալիս մի քանի հարց առաջարկել մեր քաղաքացիներին, թէ ինչպէս պիտի վճռեն:

Արդեօք ում վրա է ծանաբեռնվում միջին և ստորին դասակարգի կեանքի ցան ու հոգսը, եթէ անցեալ տարվայ դէպքերին ենթարկվի քաղաքը: Միթէ՞ կարծում են մեր քաղաքացիները, որ չքաւորները ունեն հիմայ էլ այն միջոցները, որոնցով տոկոսութիւն ունեցան նախընթաց ձմեռվայ դժբաղդութիւններին հանդուրժել, և հիմայ ևս կարող են նոյնանման արկածներին դիմանալ: Միթէ՞ կարծում են հարուստները, թէ կարող են անտարբերութեամբ նայել աղքատների դառն տանջանքներին, և սրտի բարոյական խայթոց չեն կրի:

Միակ պայմանը և կարելիութեան միակ հնարն արհեստական թանգութիւնը մեր երկրից արմատախիլ անելու այն է, որ վերջապէս դադարեցնենք այդ տեսակ երկրպագութիւնը, միանգամայն հաւատացած լինելով, որ չենք տեսնի թանգութեամբ լինելով հարուստների մօտ: Իսկ եթէ այդ չարժեւորութեանը վերջ տրվի, այն ժամանակ առիթ կը տանք գիւղացիներին, իրենց վաճառքի և մեր կեանքի գիտաւոր առարկան կազմող մթերքը բերել քաղաքում վաճառելու, այն էլ ամենաարժան գնով:

Այս խնդրին այնքան բազմակողմանի օգուտներ ունի, որին անուշադիր թողնելը մեր կողմից կը նշանակէ մեր ընդհանուր անտեսական կեանքի անդորրութեանը դաւաճանք: Զուտով ենք, որ անտարբերութեան ցոյցեր չը պէտք է նշմարենք դէպի մեր արապայտած գաղափարը:

Հմայակ

ՆՈՒՄԱՐ ԵՈՐ-ԲԱՅՈՒՄԵՏԻՑ

13 հոկտեմբերի

Հատերը համակրանօք վերաբերվում են «Մշակ» լրագրին այն պատճառով, որ նուրա հրատարակութեան շարունակութիւնից մինչև ցայժմ ունեցել է իր անկողմնակի ուղղութեան բազմաթիւ հետեւորդներ: «Մշակի» իւրաքանչիւր թերթում գտնում ենք մտաւարական և բարոյական կողմին վերաբերեալ զանազան նոր մտքեր, ազգութեան գոյութիւնը պահպանելու ամենաօգտակար և զօրաւոր միջոցներ: Կա ոչ միայն յարգելի է Ուսում-Հայաստանում գտնված հայ երիտասարդութեան համար, այլ և տաճկա-հայաստանցի մեր ազգայինքը անցեալ 1877-ի ռուս-թուրքական պատերազմից սկսեալ ցանկացան աւելի կարեւորութիւն տալ այդ թերթին, որի միջոցով նոքա կարողացան ըմբռնել շատ ազգագուտ և պիտանի մտքեր, որոնք օրերումս սկսվել են հանդէս գալ ապագայ բարօրութիւնների համար:

Օրերումս իր անձնական գործով այստեղ պատահեց Անի Հայկական Ուսումնասիրաց Ընկերութեան» լսարանի անգամներից մի պարոն. ստոյգ տեղեկութիւններ լսելու արդէն ցանկանում էինք, նրանից լսելից ու գեղել լուրեր Ասպուրականի արդի հայ երիտասարդութեան գործունէութեան վերաբերմամբ. այդ թարմ ուժերի վրա սաստիկ ներգործել է թէ ինչ է ինքնապաշտպանութիւնը: Եթէ պատահի «Մշակի» թերթերից, թէ լսարաններում և ուսումնարաններում մեծ ազահու լինամք է կարգացվում: Այդ ինքնապաշտպանական սկզբունքի վրա բարդվում են նաև ոմանց ազգու և քաջաբերի ատենախօսութիւններ. խանութպան հայերը

Այդպիսով առանց զէնքի և լէվզվելի քաղաք չեն իջնում: ամենայնպէս երիտասարդ և պատանին զինակրութեան պէտքը զգացել է և եթէ հարկ լինի, ամենազգային գործի մէջ մասնակցելու փափաք են յայտնում: Թէև սովոր բոլորովին չէ անհետացել, այնուամենայնիւ այժմ վանցի հայերը և ընկերութիւնը գործում են, անտարբեր չեն, շարժումները շատ կան...

Թիւրքաց ուշադրութիւն աւելի դրաւ է «Օրինակի» ընկերութիւնը, որ կազմված է ճարպիկ և կորովի երիտասարդներից: Նրանց երգած «Հիմի էլ լռենք» երգը մեծ տպաւորութիւն է գործել ոչ թէ միայն մեր թիւրք հիւանդների վրա, այլ և օսմանեան զօրաց նուազածուաց խումբը այդ եղանակը ածում է գեղեցիկ ներդաշնակութեամբ:

Հայաստանի հիւրը մեծ գովեստով խօսեց ռուսաց և անգլիական փոխ-հիւպատոսաց դէպի հայ երիտասարդութիւնը ունեցած անկեղծ համակրութեան վրա, որ նոքա շատ տեղում բանախօսել են թէ լսարաններում և թէ մասնաւոր խնդրներում, այն բոլոր բանախօսութիւնները վերաբերել են հայկական խնդրի նպատաւորութեան և աւելացրել են «խոհմութեամբ շարժիլ»:

Պ. Ալեքս. որը մի հնագիտական մարդ է եղել հետազօտել է Անի շրջակայքը, աջողվել է նորան Այգեստանի արեւելահայկաում Չայնոյսներ եկեղեցու կից Օմըմ Նազարայ կոչված քարայրերի շուրջ փորել տալ, որտեղից նա դուրս է բերել ամենաթանկագին իրեղեններ, քառանկիւնի և եռանկիւնի մարմարեայ սրբատաշ քարեր, մի կամ երկու արշինէն աւելի երկայնութեամբ մարմարեայ սիւներ, ոսկեայ, արծաթեայ և պղնձեայ կուռքեր զանազան նմանութեամբ և կոլի գլխաձև զուտ ոսկեայ զուլններ, և մի արծուաձև արձան որը կանգնացրած է պղնձեայ տախտակի վրա: Նոյն տեղերից դուրս են եկել նաև մանր և միջակ թանգագին քարեր, որոնցից մինը փոխ-հիւպատոսը շարունակաբար իր վրա է կրում: Մի ուրիշ տեղից դուրս է բերվել գոյնզգոյն քարեայ փարէր, որոց տեսակից նոյնպէս գտնվել է վանեցոց տներում, մէջը օղի ածելու համար:

Ենդիպցի հնագէտը տակաւին շարունակում է այդ հետաքրքրական հետազօտութիւնները. դուրս եկած հնութիւններից մի մասը հակեր կապելով ուղարկել է ուր որ հարկն է, և մտադիր է հետազօտել նաև Հայոց Չոր և Ղաթաբաղ գաւառների մէջ գտնված մի քանի նշանաւոր բլուրները և այլերն ևս: Ինչպէս երեւում է պ. Ալեքս. այդ գործը կատարում է պաշտօնապէս, և խոստացել է Չայնոյսներ եկեղեցու շրջակայքից դուրս եկած իրեղենների արժէքից չօրսէն մի մաս արդիւնքը տալ եկեղեցու: Ղա հաւանական է որ եկեղեցին կունենայ մանաւոր օգուտ, բայց կարծիք չը կայ որ այդ բոլորը պատկանում է հայոց, երբ նոքա դեռ շատ ժամանակ Նահաջիտին, Հերակլին և Արտեմիսին մեծ գոհակրութիւն երկրպագում: Խորակոյտ չը կայ որ այդ նրանց աստուածներն են: Ար օգտանք ստոյգ տեղեկութեանց, որ պարոնը խոստացաւ տեղեկագրել մեզ:

Ինչպէս երեւում է այժմ Անի առաջնորդարանի կողմանէ սկսվել է կրկնակի վերածակրութիւն. պարոնը մեզ հաւատացրեց, որ անյայտ հայերի թիւը աւելացաւ: Մշակի» խօսքերը հետզհետէ կունենան իրանց արդիւնաւորութիւնը: Միջակագիրը Արծնէ նահանգի Ռօհտան գաւառի ընդարձակ ձորերում գտել են ութսուն հազարէն աւելի քրդախօս իսկական հայեր, և

Խմբի ու իր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ՍՐԵՐԱՆԵՆԻ

